ԴՐԱՄՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ

1.Հնամաշ և վնասված թղթադրամներ և մետաղադրամների Բանկ մուտքագրման դեպքում այդ մասին գրառվում է հատուկ առանձնացված հնամաշի դրամարկղում, որտեղ նշվում են գործարքի արժույթը անվանական արժեքը:

2.Արժույթի հնամաշության հատկանիշները որոշվում են՝

2.1.ՀՀ դրամի դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Բանկում դրանք փոխարինվում են անվճար և առանց սահմանափակման:

2.2.ԱՄՆ դոլար՝ մինչև 1996 թվականը թողարկված բոլոր թղթադրամներն անկախ անվանական արժեքից և ֆիզիկական վնասվածությունից,

2.3. 1996 թվականից հետո թողարկված ԱՄՆ դոլարը և մնացած այլ /Եվրո, ՌԴ, անգլիական ֆունտ և այլն/ տեսակի թղթադրամները, ելնելով թղթադրամի ֆիզիկական վնասվածությունից՝ պատռվածք 2մմ և ավելի, թանաքոտված, ճմրթված, թրջված, գրառումներով:

3.Հնամաշ արտարժույթի փոխարինման գործարքներն իրականացվում է Բանկի կողմից սահմանված «Սակագներ և դրույքաչափեր»-ին համաձայն:

4. Բանկ մուտք եղած հնամաշ և վնասված թղթադրամների և մետղադրամների վերաբերյալ կազմվում է մուտքի օրդեր, որը ստորագրվում է ընդունող գանձապահի և հանձնող հաճախորդի կողմից, գանձվում է Բանկի կողմից հաստատված համապատասխան սակագինը:

5.Մասնաճյուղ մուտք եղած հնամաշ և վնասված թղթադրամները առնվազն ամիսը մեկ անգամ կարգագրով ինկասացվում են Բանկի կոնկրետ մասնաճյուղ, որի վերաբերյալ կազմվում են ելքի և մուտքի օրդերներ:

6. Բանկ մուտք եղած կասկած հարուցող դրամական միջոցների հայտաբերման դեպքում այդ մասին գրառում է կատարվում դրամարկղային գրքում, ինչպես նաև կազմվում է համապատասխան ակտ, որտեղ նշվում են բոլոր անհրաժեշտ վավերապայանները: Ակտը ստորագրում են ընդունող գանձապահը, հանձնող հաճախորդը, մասնաճյուղում՝ նաև կառավարիչը, Բանկում՝ նաև դրամարկղի վարիչը:

7.Բանկ մուտք եղած կասկած հարուցող դրամական միջոցները կազմված ակտի հետ ներկայացվում են ՀՀ ԿԲ՝ փորձաքննություն կազմակերպելու համար: Փորձաքննության եզրակացությամբ դրամական միջոցները կեղծ ճանաչված լինելու դեպքում դրանք Բանկին չեն վերադարձվում և այդ մասին տեղյակ է պահվում իրավապահ մարմիններին: